

րիշ հագուստներ շինել, թէպէտ և  
Վաշմիրի շալին չկրցան հասցընել:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻՄԱԿՈՒԹԻՒՆ

Դ. Խնչղէս պէտ է իրեւ բշառը աս-  
դածպաշտութեան մէջ:

ԱՐԴՈՒՍ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆԸ ՀԱ-  
ՄԱՐ ՈւՐԻշ ԱՄԷՆ ՄԵՂԵԿՈՒԹԵՆԷ ԱւԵ-  
ԼԻ ՀԱՐԿԱՍՈՐՆ Ու ՕԳՄԱԿԱՐՆ Է ՀԱԼԱ-  
ՄՈՅ ԲԱՆԵՐՈՇՆ ՄԵՂԵԿՈՒԹԻՒՆԸ. ՎԱՄՆ  
զի մէկը առանց գիտուն ըլլալու կրր-  
նայ երջանիկ ըլլալ, բայց առանց հա-  
ւատոյ ոչ երեկք: Հաւատքով միայն  
է որ հոգինիս Ճշմարիտ խաղաղութին  
կը գտնէ, և ամէն նեղութեան կը  
համբերէ. թշուառութեան ատեն  
մեծ միիթմարութիւննիս ան է, յաջո-  
ղութեան ատեն ալ զմեզ մեր չափին  
մէջ բռնողը ան է: Աւստի ամենա-  
հարկաւոր է որ կրօնքի տեղեկութիր  
ու Խստուծոյ հրամանները 'ի գործ  
դնելը տղոց մտքին մէջ պատիկուց  
տպաւորուի: Ա ասն զի ինչպէս ուրիշ  
անգամ ըսինք, ինչ և իցէ բան թէ  
որ պատիկութեան ատեն տպաւորուի  
անջնջելի կը մնայ տղոց մտքին մէջ.  
ուստի այնպէս սորվեցընելու է տը-  
ղոց աս կրօնքի սկզբունքները, որ ոչ  
չար օրինակով և ոչ սաստիկ կրքերէ ի-  
րենց կրօնքին հաստատութիւնը խախ-  
տի: Ի՞այց աս սկզբունքները տպաւո-  
րելու ատեն որչափ սխալմունքներ,  
որչափ գէշ կերպեր կը բանեցընեն ո-  
մանք. ասոնց գլխաւորները համառօտ  
մը դնենք հոս՝ որպէս զի զգուշանան:

Ա. Տղոց պէտք չէ շատ այնպիսի ա-  
զօթքներ ընել տալ՝ որուն իմաստը  
չեն ըմբռներ, հապա պէտք է աղօթ-  
քին ոյժն ու իմաստը բացատրել, մա-  
նաւանդ անոնք որ սովորական աղօթք-  
ներ են, որպէս զի սրտերնին ու

մտքերնին հոգեոր եռանդովլեցուի:  
Բ. Պէտք չէ անհոգութիւն ընել  
տղոց հաւատոյ վարդապետութիւն-  
ները սորվեցընելու, և առաքինական  
գլխաւոր սկզբունքները հասկրցընե-  
լու. վասն զի թէ որ չգիտնան թէ ա-  
ռաքինութիւնը ինչքանի մէջ կը փայ-  
լի և ինչ օգուտներ ունի անիկայ, 'ի  
գործ դնելու ալ անհոգ կ'ըլլան, և  
ասոր ներհակ՝ չեն գիտնար թէ ինչ  
ձամբով ախտերէ պիտի զգուշանան:

Գ. Խիստ օգտակար է տղոց սուրբ  
գրքին մէջի հաւատոյ ու բարի վա-  
րուց վերաբերեալ պատմութիւնները  
պատմել: Ի՞այց ծնողք կան որ փոխա-  
նակ ասանկ հոգեոր պատմութիւն-  
ներ պատմելու, խենդումենդ ուրուա-  
կաններ ու սուտ ու մուտ տեսիլներ  
կը պատմեն, որ շատ գէշ ու վնասա-  
կար բան է:

Դ. Պէտք է շատ անգամ լսեն տղաք  
իրենց ծնողքներէն թէ սուրբերուն  
չէ թէ ան կերպով աղօթք կ'ընենք  
որ իբր թէ անոնց ձեռքը ըլլար մեզի  
շնորհք տալն ու չտալը. հապա անոր  
համար որ մեզի բարեխօս ըլլան Խս-  
տուծոյ առջելը. ապա թէ ոչ, ծայլը  
աւելորդապաշտութեան կ'երթայ, և  
եկեղեցին սուրբ ժողովքներով այս-  
պիսի աւելորդապաշտութիւնները ար-  
գիլած է. եպիսկոպոմներուն ու քա-  
րոզիլներուն ալ պարտք դրած է որ  
հաւատացելոց սորվեցընեն թէ ինչ-  
պէս պիտի խնդրեն սրբոց բարեխօ-  
սութիւնը, և զանոնք օգնութիւն  
պիտի կանչեն:

Ե. Կ ատ անգամ հասարակ ժո-  
ղովուրդը իրենց որդւոցը չեն կրնար  
սորվեցընել թէ Ճշմարիտ աստուած-  
պաշտութիը միայն արտաքին պարտ-  
քերը կատարելուն վրայ չէ, հապա  
աւելի Խստուծոյ պատուիրանքները  
պահելուն վրայ է, և թէ կատարեալ  
քրիստոնեայ չէ ան մարդը որ առա-  
քինի չէ. ինչպէս որ կը զուրցէ Ի՞ա-  
ւիթ մարդարէն. “Պատարագ Խս-  
տուծոյ հոգի խոնարհ. զսիրտ սուրբ  
և զհողի խոնարհ Խստուած ոչ ար-

Համարհէ . . . : Հոս չենք ուզեր կրկնել  
ան ծուռ ենթադրութենէ առաջ ե .  
կած վնասները , թէ լ'ստուծոյ հաճոյ  
ըլլալու համար՝ բաւական է քանի մը  
բարի գործքեր ընել , և թէ հարկ  
չկայ մեր կրքերը սանձել և առաքի-  
նութեան ետևէ ըլլալ : Լ'սոնք այն-  
պիսի վնասակար թոյներ են որ ծնողք  
ամէն ջանք պիտի ընեն իրենց տղոց-  
մէն հեռու բռնելու :

## ԵՐԿՐԱԴՈՒԾՈՒԹԻՒՆ

## [ԸՆԴՀԱՆՈՒՐ :

ԵՐԿՐԱԾ բերքերուն մէջ [ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԹՈՒՓ՝ ըսուածն ալ հին ատենէն 'ի  
վեր շատ յարգի բան եղած է , մանա-  
ւանդ չ'ունաց ու հումայեցւոց մէջ .  
իսկ հիմա ասոր գործածութիւր գրե-  
թէ Երոպայի ամէն կողմը տարա-  
ծուած է : Երեւելի բանաստեղծներ  
ալ շատ երգեր ու գովեստներ շինե-  
ցին թարթուֆին վրայ . բայց մենք  
հոս տեղս կ'ուզենք իրեն յատկու-  
թեանցը վրայ միայն խօսիլ , թէպէտ  
և ինչուան հիմա դեռ աղէկ մը ձանչ-  
ցուած չեն բոլոր յատկութիւնները :

Ինապատումները միաբան կը հաս-  
տատեն թէ թարթուֆը սունկի տե-  
սակ մըն է . միայն արմատ ունի՝ որով  
հողուն հետ կպած կը մնայ . իսկ տե-  
րեւ ու ձիւղ ամեննեին չունի , անոր  
համար դրսէն ալ ամեննեին չիմացուիր  
ուր տեղ գտնուիլը : Եւ թէ որ անա-  
սուններէն ոմանք ասոր հոտէն չը-  
ձանչնային , մարդիկ չէին կրնար գըտ-  
նել :

Այրի խոզերը թարթուֆը շատ  
կը սիրեն , անոր համար Երոպացիք  
թարթուֆը անոնց հանել կուտան .  
բայց շատ անգամ խոզերը հանածնին  
իրենք ուտելուն համար , անոնց տե-  
ղը տեսակ մը չներ կը գործածեն , որ

գետինը փորելով՝ թարթուֆ եղած  
տեղը կը յայտնեն . մարդիկ ալ նոյն  
տեղը փորելով դուրս կը հանեն :

[ԸՆԴՀԱՆՈՒՐ կը գտնուի աւելի կաղ-  
նիի ու շագանակի անտառներու մէջ .  
բայց ան ծառերը ամեննեին օգուտ  
մը չունին թարթուֆին աճմանը .  
միայն թէ նոյն դիրքը երկուքին ալ  
աղէկ կը յարմարի . և աւելի կաւոտ  
աւազախառն , թեթև ու խոնաւ եր-  
կիրներ կը սիրեն , և սովորաբար 5,6  
ոտք խորունկը կը գտնուին : [ԸՆԴՀԱՆՈՒՓ  
բուսած երկիրներն ընդհան-  
րապէս խորտուքորտ և ձեղքըստած  
են . ու դատարկ տեղւոյ մը զարնե-  
լով ինչ ձայն որ կ'ելլէ , այսպիսի տե-  
ղուանք ալ ամեննեին նոյն ձայնը կը  
հանեն . թէպէտ աս նշաններս ալ բո-  
լորովին ստոյգ չեն :

[ԸՆԴՀԱՆՈՒՐ գրեթէ ամէն տեղ  
կը գտնուի , բայց աւելի բարեխառն  
երկիրներու մէջ . Փիիկմոնթի ու Վազ-  
դիոյ մէջ գտնուածները առատ են , և  
հոտերնին ու մսերնին ալ շատ հա-  
մեղ է :

[ԸՆԴՀԱՆՈՒՐ ֆին ձեւը ընդհանրապէս  
կլոր կ'ըլլայ , գոյնը սե կամ մոխրա-  
գոյն , վրան կունտ կունտ . միջուկը  
կարծր է ու սեկակ երակներով թերթ  
թերթ բաժնուած է . և թէ որ մէջ  
տեղէն ձղբելու ըլլաս՝ աս երակները  
որոշ կ'երեւան :

Կ ատ վէճեր եղան թէ արդեօք  
թարթուֆը ինչէն առաջ կուգայ , և  
ինչուան հիմա դեռ չէ իմացուած . ա-  
ւելի հաւանական է որ ինքը հասուն-  
ցած ատենը կտոր կտոր կը բաժնուի ,  
ու անոնցմէ նոր արմատներ կ'ելլէն :  
Ոմանք փորձի համար պարտէզներու  
մէջ թարթուֆի կտորուանք ցաներ  
են , և կ'ըսեն թէ փորձերնին յաջողեր  
է : [ԸՆԴՀԱՆՈՒՐ աս բանս ստոյգ է ( ինչպէս  
որ ալ կ'երեւայ ) կրնայ մարդ թար-  
թուֆը շատցընել . բայց յայտնի է  
թէ ան ատեն իր յարգն ալ կը կոր-  
սուի . վասն զի ասիկայ միայն քիչ  
գտնուելուն համար այնչափ ախորժե-  
լի եղած է . և զարմանալի օգուտ մը